

Կ-904-02.12.2015-ԳԿ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 22-րդ կետով.

« 22) Նպատակային ուսուցում՝ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցում:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Նպատակային ուսուցմամբ ուսանող ՀՀ քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար բարձրագույն եւ հետբուհական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցութից առանձնացված՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգի: Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաեւ հետեւյալ պայմանը. Ուսանողը ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով, ՀՀ կառավարության սահմանած կարգով, գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում: Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը ՀՀ կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձեով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի եւ պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

Փոխհատուցված գումարի 70 տոկոսը *բարձրագույն ուսումնական հաստատությունը* վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 30 տոկոսը տնօրինում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին եւ երրորդ պարբերություններում «ինչպես նաեւ» բառերից հետո լրացնել «նպատակային ուսուցմամբ ուսանողներին, այդ թվում՝» բառերը:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և
«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ
առաջարկությունների**

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/	Առաջարկում եմ նախագծերի 2-րդ հոդվածները լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի և պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը տրամադրվում է այն համապատասխան մասնագետին, որը նպատակային ուսուցմամբ ուսանողի փոխարեն առնվազն 3 տարի ժամկետով ՀՀ կառավարության սահմանած կարգով համաձայնություն կտա գործողվելու աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրում:	Չի ընդունվել.	Պայմանագրային պարտավորությունները չկատարած ուսնողի ուսումնառության տարիների համար ՀՀ պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի և պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը այլ անձի տրամադրելը նպատակահարմար չէ: Օրենսդրական նախաձեռնությամբ ակնկալվում է, որ կկարգավորվեն պետական պատվերի շրջանակում բարձրագույն և հետբուհական նպատակային կրթության հետ կապված հարաբերությունները, իսկ փոխհատուցման ենթակա գումարի ամրագրումը կբարձրացնի նպատակային տեղում սովորողի պատասխանատվությունը ՝ կատարելու իր պարտավորությունը պետության և համայնքի նկատմամբ, այն է. պետության աջակցությամբ

			կրթություն ստանալու և ստացած մասնագիտությանը համապատասխան 3 տարի աշխատելու պարտավորությունը: Այլապես, պետության միջոցներով կրթություն ստանալը և պայմանագրային պարտավորություն չկատարելու համար պետության կողմից ուսումնառության համար ծախսված գումարին համարժեք փոխհատուցում վճարելը կարող է վերաժվել «սպառողական վարկի» ձեռքբերման:
ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծերի 2-րդ հոդվածների 2-րդ պարբերություններում «բուհ» բառը փոխարինել «բարձրագույն ուսումնական հաստատությունը» բառերով՝ նկատի ունենալով, օրենքներում այս բառերի կրառությունը:	Ընդունվել է.	Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ: